ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » մայիսի 2025թ. № 397

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՄԲՈՅԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ «Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ի մարզիկ Զինաիդա Արսենի Սարգսյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի դեռահասների առաջնությունում զբաղեցրել է 1-ին տեղը, Արա Վարդանի Սահակյանը զբաղեցրել է 2-րդ տեղը, Անդրե Սասունի Սարդարյանը Հայաստանի Հանրապետության սամբոյի պատանիների առաջնությունում զբաղեցրել է 2-րդ տեղը, Նոյ Վահեի Խաառատյանը, Մերուժան Արայիկի Մանուկյանը և Սևակ Արգամի Դավոյանը զբաղեցրել են 3-րդ տեղերը, հիմք ընդունելով օրինական ներկայացուցիչներ՝ Սաբինա Սերգեյի Սարգսյանի, Թամար Ժիրայրի Սիմոնյանի, Լուսինե Արտուշի Հովակիմյանի, Նազելի Գևորգի Թերոյանի, Սիրուշ Ռուդիկի Գյուլազյանի, Սիրարփի Համբարձումի Նիկողոսյանի դիմումները, հավաստագրերը, և «Հայաստանի սամբոյի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության նախագահ Միքայել Հայրապետյանի կողմից տրված տեղեկանքը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից մարզիկներին պարգևատրելու համար տրամադրել 151 000 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գույքագրի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. մայիսի 12
ք.Սպիտակ